ՀՏԴ 330.1(479.243) Տնտեսագիտություն

ԿԱՌՈՒՑՎԱՑՔԱՅԻՆ ՀԱՄԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐԴԻ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐԸ ԼՂՀ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Շուշանիկ ԱՍՐՅԱՆ

Բանալի բառեր *- Տնտեսական համամասնություններ, տնտեսության ճյուղային կառուցվածք, կառուցվածքային էֆեկտ, տնտեսության վերարտադրողական կառուցվածք, կառուցվածքային վերափոխումներ, զբաղվածության կառուցվածք, արդյունաբերության առաջադիմական կառուցվածք, տնտեսության կառուցվածք և մրցունակություն:*

Ключевые слова*: экономические соотношения, структура экономики, отраслевая структура экономики, структурный эффект, структура ВВП, структура национального дохода, воспроизводственная структура экономики, структура занятости, передовая структура промышленности, экономическая структура и конкуренция, структурные преобразования*

Keywords*: economic relations, structure of the economy, sectored structure of the economy, structural effect, structure of GDP, the structure of the national income, reproductive structure of the economy, employment structure, advanced industrial structure, economic structure and competition, structural changes.*

Sh.Asryan
Actual Problems of Structural Relations in the NKR Economy

The article is focused on the structural relationship in different spheres of economy, which are involved in the process of its modern development.

To reform structural relations in the NKR economy, the following existing structures: GDP, the real sector of economy, financial, industrial and other sectors, which are submitted to deformations is actual to consider.

The article introduces these problems in the NKR economy and observes the possible ways to solve them.

Ш. Асрян
Актуальные проблемы структурных соотношений в экономике НКР

Статья посвящена структурным соотношениям в разных сферах экономики, которые играют важную роль в процессе ее современного развития.

Для реформирования структурных соотношений в экономике НКР актуальными являются следующие существующие структуры: ВВП, реальный сектор экономики, экономический, промышленный, финансовый и другие сектора, которые подвержены серьезным деформациям.

В статье рассмотрены проблемы данных структурных соотношений в экономике НКР и отмечены возможные пути их разрешения.

Ժամանակակից տնտեսությունների զարգացման գործընթացում էական դեր ու նշանակություն են ձեռք բերում տնտեսության տարբեր բնագավառներում ձևավորվող համամասնությունները : Դրանք արդիական հնչեղություն են ստանում նաև ԼՂՀ տնտեսության կառուցվածքային համամասնությունների բարեփոխման առումով , քանզի տնտեսության իրական հատվածի, ՀՆԱ-ի, արդյունաբերության, ֆինանսական բնագավառի և այլ բնագավառներում առկա կառուցվածքները բնորոշվում են լուրջ ձևախեղումներով: Հոդվածում ներկայացվել են կառուցվածքային համամասնությունների արդի հիմնախնդիրները ԼՂՀ տնտեսությունում, և նախանշվել են վերջիններիս բարելավման հնարավոր ուղիները:

Ժամանակակից ազգային տնտեսությունների՝ որպես մակրոտարրերի մեկը մյուսի հետ սերտորեն փոխկապված համակարգի կարևոր բնութագրիչներից են ճյուղային, վերարտադրողական, սոցիալական, արտաքին առևտրի տարածաշրջանային և այլ կառուցվածքները , որոնցից յուրքանչյուրը, և դրանց փոփոխությունները յուրահատուկ դեր ու նշանակություն ունեն տնտեսական համակարգի հավասարակշռության ու կայուն զարգացման գործընթացներում:

Տնտեսական համամասնությունների տեղաշարժերի գիտական ուսումնասիրություններով հանդես են եկել աշխարհի բազմաթիվ հայտնի տնտեսագետներ, այդ թվում ամերիկյան տնտեսագետներ՝ Դ. Գելբրայթը, Ս. Կուզնեցը, Վ. Լեոնտևը և շատ ուրիշներ : Այդ

ուսումնասիրությունների գլխավոր նպատակը կառուցվածքային փոփոխությունների և տնտեսության զարգացման մակարդակի միջև առկա փոխառնչությունների բացահայտումն էր:

Որպես կառուցվածքային փոփոխությունների դրական արդյունքների չափանիշ՝ հայտնի է <<կառուցվածքային էֆեկտ>>-ը, որն արտահայտում է տնտեսության կառուցվածքային փոփոխության (գլխավորպես ճյուղային) և կարևորագույն ցուցանիշների աճի դինամիկայի միջև կապը[1]: Իհարկե, անվիճելի է այն, որ տնտեսության՝ որպես սոցիալ-տնտեսական բարդ փոխահարաբերությունների համակարգի զարգացումը ամբողջականորեն չի կարող գնահատվել կառուցվածքային փոփոխությունների խորությամբ, սակայն կառուցվածքային փոփոխությունները կարող են հիմք հանդիսանալ ոչ միայն իրականացված տնտեսական քաղաքականության արդյունքների, այլև՝ տնտեսության ապագա զարգացումների հնարավոր միտումների գնահատման համար:

Անդրադառնալով համաշխարհային տնտեսության և վերջինիս շրջանակներում առանձին ազգային տնտեսությունների զարգացման պատմական փորձին՝ կարող ենք նկատել, որ բազմաթիվ երկրներում տնտեսական աճի բարձր մակարդակ և տնտեսությունների կայուն զարգացում ապահովվեց տնտեսությունների կտրուկ և շրջադարձային կառուցվածքային վերափոխումներով: Այսպես. ԽՍՀՄ տնտեսության ինդուստրիալ քաղաքականության արդյունքում, համեմատաբար կարճ ժամանակահատվածում ձևափոխելով արդյունաբերության կառուցվածքը, երկիրը բարձրացվեց աշխարհում առաջատարների շարքը: Կառուցվածքային ձևափոխությունների առավել հետաքրքիր փորձը պատկանում է Հարավ-արևելյան Ասիայի նոր զարգացած արդյունաբերական մի շարք երկրների, որոնց արտադրության ծավալի աճը ապահովվեց առաջին հերթին այդ երկրների համար ոչ ավանդական ճյուղերի զարգացման միջոցով՝ բարձրացնելով երկրների ապահովության, ինքնաբավության մակարդակները, մրցունակության, ազգային տնտեսության անվտանգության աստիճանը: Տնտեսությունների զարգացման նշված պատմական փորձը վկայում է, որ <<կառուցվածքային էֆեկտ>>-ը անհրաժեշտ է դիտարկել առավել լայն տեսանկյունով:

Այսօր աշխարհում զարգացման օրակարգերը ձևավորվում են այն մոտեցմամբ, որ առաջընթացի հստակ և համընդհանուր կիրառելի բանաձևեր գոյություն չունեն: Միևնույն ժամանակ գլոբալ տնտեսական միջավայրում ի հայտ են գալիս դերային նոր որակի վերաբաշխումներ ու նոր բնույթի ուժային կենտրոններ, և սուր հնչեղություն են ստանում ազգային տնտեսությունների տնտեսական ու սոցիալական անվտանգության հիմնահարցերը, իսկ դրանք սերտորեն փոխառնչվում են կառուցվածքային համամասնությունների փոփոխությունների հետ: Կարծում ենք, ելնելով ազգային տնտեսություններին առաջադրված վերոնշյալ խնդիրներից՝ <<կառուցվածքային էֆեկտ>>-ը կարող է բնորոշվել որպես տնտեսության կառուցվածքային փոփոխության և կարևորագույն ցուցանիշների աճի դինամիկայի միջև այնպիսի կապ, որի արդյունքում բարձրանում է տնտեսության մրցունակությունն ու անվտանգության աստիճանը, և ստեղծվում են նախադրյալները կայուն տնտեսական աճի և տնտեսության հետագա զարգացման համար:

ԼՂՀ տնտեսությունում տնտեսական ակտիվ բարեփոխումների՝ տնտեսության ազատականացման և հետագայում նաև տնտեսության կայունության ապահովմանն ուղղված պետական միջոցառումների տրամաբանական շարունակությունը դարձան տնտեսության կառուցվածքային փոփոխությունների միջոցառումները, որոնց արդյունքում ԼՂՀ մակրոտնտեսական հիմնական ցուցանիշների ակնհայտ ձեռքբերումներին զուգընթաց, տնտեսությունում արձանագրվեցին նաև կառուցվածքային տեղաշարժեր՝ բարելավելով բնակչության բարեկեցության, ինքնապահովման, և հետևապես, որոշակիորեն նաև տնտեսության անվտանգության մակարդակը:

[1] Տես՝Ա.Գ. Աղամբեկյան, Մ.Յ. Մկրտչյան, Մ. Ս. Գևորգյան, Երևան, 1999թ. Տնտեսական վերափոխումները անցումային շրջանում, էջ160:

Այդ իմաստով ուշագրավ է այն, որ 2006-2013թթ.[1] ընկած ժամանակահատվածում տնտեսական աճի միջին տեմպը կազմեց 10,1%, իսկ ՀՆԱ-ի կառուցվածքում ծառայությունների տեսակարար կշիռը 2006թ. 51,0 %-ի համեմատությամբ աճելով՝ 2013թ.[2] կազմեց 62,8%, ինչը համահունչ է զարգացած տնտեսությունների ՀՆԱ-ի կառուցվածքին: Կառուցվածքային տեղաշարժերի և տնտեսական աճի փոխառնչությունները վկայում են կառուցվածքային դրական էֆեկտի մասին, ինչի առավել ցայտուն վկայությունը մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ի աճն է, ըստ որի 2013թ.[3] 2006թ. համեմատությամբ այն կրկնապատկվել է, հետևապես նաև՝ բնակչության նյութական և հոգևոր բարիքներով, ծառայություններով ապահովվածության աստիճանը :

Սակայն տնտեսական զարգացման հարցերը չեն կարող սահմանափակվել միայն մակրոտնտեսական ցուցանիշների առկա մակարդակի և տնտեսության ձևավորված կառուցվածքի գնահատումով: Առավել կարևոր են ապագայում տնտեսական աճ և զարգացում ապահովելու տեսանկյունից ներկայում ձևավորվող նախադրյալները, ինչը հանգեցնում է ինչպես տնտեսության, այնպես էլ՝ արդյունաբերության առաջադիմական կառուցվածքի ապահովման հարցին:

Աղյուսակ 1[4]

Մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ն ՀՀ-ում և ԼՂՀ-ում

	2007թ.		2011թ.		2011թ./2007թ. նկատմամբ, % (ԱՄՆ դոլարով)	2012թ.-ի սպասողականը	
	հազ. դրամ	ԱՄՆ դոլար	հազ. Դրամ	ԱՄՆ դոլար		Հազդրամ	ԱՄՆ դոլար
ՀՀ	976	2853	1156	3102	108,72	1285	3392
ԼՂՀ	510	1490	936	2513	168,72	1040	2745
ՀՀ-ն ԼՂՀ-ի նկատմամբ /անգամ/	1,9		1,2			1,2	
ԼՂՀ-ն ՀՀ-ի նկատմամբ, %	52		81			81	

Ժամանակակից զարգացած արդյունաբերական երկրներում ճյուղային տեղաշարժերի ընդհանուր օրինաչափությունները բնորոշվում են. նախ՝ ենթաճյուղերի մակարդակով գիտատար ճյուղերի համեմատաբար բարձր մակարդակով, արդյունաբերության տեխնիկական վերազինմամբ, իսկ տնտեսության կառուցվածքը՝ հումքային ճյուղերի և գյուղատնտեսության տեսակարար կշռի զգալի իջեցմամբ և ծառայությունների ոլորտի արագ աճով : Իսկ զարգացող, այսպես կոչված նոր ինդուստրիալ երկրները՝ Սինգապուր, Թայվան, Հարավային Կորեա, Հոնկ-Կոնգ, մեծամասամբ հիմնվելով արտադրանքի որակի և աշխատողների բարձր որակավորման վրա, մասնագիտանում են տեխնիկական բարդ և գիտատար արտադրություններում : Ժամանակակից ֆիզիկական սահմանափակումների աշխարհում նոր գաղափարների հայտնագործումն է, որ ապահովում է շարունակական տնտեսական աճ: Այս համատեքստում զարգացման պարադիգման, որպես առաջընթացի շարժիչներ, ենթադրում է գիտելիքի կուտակումը, նոր գաղափարների ստեղծումը, առևտրայնացումն ու տարածումը, դրանց կիրառությունների արդյունավետ յուրացման համար՝ մրցավազքը, ինչը ԼՂՀ տնտեսական զարգացման ժամանակից էտապում դեռևս նկատելի չէ :

[1] ԼՂՀ վիճակագրական տարեգիրք 2002-2008թթ. էջ 155, ԼՂՀ վիճակագրական տարեգիրք 2008-2014թթ. էջ157: ԼՂՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2011թվականի հունվար-դեկտեմբեր, էջ 6:

[2] Աղյուսակի 2-ի տվյալները հաշվարկվել են ԼՂՀ և ՀՀ վիճակագրական տվյալների հիման վրա:

[3] Տես՝ ԼՂՀ վիճակագրական տարեգիրք 2008-2012թթ. էջ158:

[4] Աղյուսակի 2-ի տվյալները հաշվարկվել են ԼՂՀ և ՀՀ վիճակագրական տվյալների հիման վրա:

ԼՂՀ արդյունաբերությունը երկրի տնտեսության գլխավոր ճյուղերից է, որտեղ զբաղված են տնտեսության աշխատանքային ռեսուրսների 12,7%-ը : Անդրադառնալով տնտեսության և արդյունաբերության ճյուղային կառուցվածքի տեղաշարժերի առանձնահատկություններին՝ կարող ենք նշել, որ 2013թ. արդյունաբերության կառուցվածքում մշակող արդյունաբերությունը կազմել է 43,2%՝ գերազանցելով հանքարդյունաբերությանը, սակայն արդունաբերության ենթաճյուղային կառուցվածքում բացակայում են տնտեսական առաջընթաց ապահովող ճյուղերը : ԼՂՀ տնտեսական աճի բարձր ցուցանիշները ապահովվում են աճի ոչ կայուն շարժիչներով՝ գլխավորպես ծառայությունների, անտառտնտեսության և զուղատնտեսության հաշվին, և որպես հետևանք խախտվում են կայուն աճի ապահովման անհրաժետ պայմանները:

Տնտեսական զարգացման ոչ բարձր մակարդակ ունեցող երկրներում տնտեսական աճը ապահովվում է գլխավորապես էքստենսիվ ճանապարհով : Այդ առումով բացառություն չէ նաև ԼՂՀ-ն, քանզի մի կողմից տնտեսության մեջ բացակայում են տեխնոլոգիական առաջընթաց կրող ճյուղերը, իսկ մյուս կողմից տնտեսության մասշտաբով միջին արտադրողականության փոփոխություն գրեթե չի գրանցվում: Հետևապես, ԼՂՀ-ում տնտեսական աճ- մրցունակության կապը կարելի է ասել, որ բացակայում է: Ավելին, էքստենսիվ տնտեսական աճի և հանքհումքային արդյունաբերությունից տնտեսության կախվածության խորացումը ոչ միայն չի նպաստում տնտեսության կայուն զարգացման ապահովմանը, այլև նվազեցնում է տնտեսության դիվերսիֆիկացման մակարդակը, կրճատում՝ տնտեսության ներքին պոտենցիալը:

Կարծում ենք, ցանկացած երկրի տնտեսական նվաճումները առաջին հերթին կարող են գնահատվել տվյալ երկրի տնտեսական աճի ապահովման սեփական միջոցների առկայությամբ կամ այլ կերպ ասած տնտեսական աճի սեփական նախադրյալներով, որի վերաբերյալ առավել ընդհանրական պատկերացում է տալիս տնտեսության վերարտադրական կառուցվածքը : Ընդլայնված վերարտադրության ապահովման տեսանկյունից կարևոր են վերարտադրական կառուցվածքի բնորոշիչների՝ սպառման, կուտակման և հիմնական ֆոնդերում ներդրումների միջև առկա համամասնությունները :

Խորհրդային տարիներին ըստ կառուցվածքային համամասնությունների հիմնական հարցի՝ բարձր տնտեսական աճ կարող է ապահովվել, եթե արտադրության միջոցների և սպառման առարկաների արտադրության մեջ պահպանվի հետևյալ համամասնությունը՝ 1-ին (ստորաբաժանման արտադրության) միջոցների առաջանցիկ աճը 2-ի (սպառման առարկաների) նկատմամբ:

Այսօր այն մտացածին է թվում, քանի որ բազմաթիվ երկրների տնտեսական աճի բարձր տեմպերը ապահովվել են սպառման առարկաների արտադրության մեջ տնտեսությունների մասնագիտացման արդյունքում:

Վերարտադրական գործընթացների համամասնությունների շրջանակում ԼՂՀ բնակչության դրամական եկամուտների և ծախսերի կառուցվածքի դիտարկումները բացահայտում են հետևյալ համամասնությունները. 2013թ. տվյալներով նախ՝ բնակչության անվանական եկամուտների 93.2%-ը ծախսվել է ապրանքների ձեռքբերման վրա, պարտադիր վճարումները կազմել են 5,2%-ը, իսկ խնայողությունների կուտակումն ավանդներում, արժեթղթերում և տարադրամի ձեռքբերումը եկամուտների մեջ՝ 1,6%-ը , մյուս կողմից ՀՆԱ-ի կառուցվածքում հիմնական կապիտալի սպառման ցուցանիշը 2006թ. 10,1%-ի փոխարեն կրճատվել և 2012թ. կազմել է 9,1%: Ազգային խնայողությունների ակնհայտ ցածր մակարդակի, ՀՆԱ-ում հիմնական կապիտալի սպառման մակարդակի կրճատման միտումների, այսինքն՝ վերարտադրական տեսանկյունից սպառման, խնայողության և հիմնական կապիտալում ներդրումների սեփական միջոցների անհամամասնական կառուցվածքի պայմաններում, միանշանակ, երկրի սեփական ռեսուրսները բավարար չեն տնտեսական աճի բարձր

մակարդակ ապահովելու համար, և այդ առումով ԼՂՀ-ում պահպանվում է օտարերկրյա ներդրումների ներգրավման խիստ անհարժեշտություն:

Վերարտադրական կառուցվածքում շատ կարևոր են նյութական արտադրության և ֆինանսական ոլորտների միջև հարաբերակցությունը, ինչով պայմանավորված է ինչպես նյութական ճյուղերի, այնպես էլ առանձին շրջանների զարգացման մակարդակը : Այդ առումով ևս ԼՂՀ-ում առկա ձևախեղումները խոչընդոտում են նյութական ոլորտի զարգացմանը , այսպես. ԼՂՀ-ում ներդրումների ծավալի և կառուցվածքի անհամամասնությամբ պայմանավորված՝ ԼՂՀ շրջանները արձանագրում են զարգացման տարբեր մակարդակներ:

Տնտեսության վերարտադրական կառուցվածքի ձևախեղումների պատճառներից մեկը ազգային եկամտի կառուցվածքային անհամամասնություններն են : Զարգացած տնտեսություններում ազգային եկամտի կառուցվածքային համամասնության հիմնական առանձնահատկությունն այն է, որ վարձու աշխատողների աշխատավարձը ՀՆԱ-ի կառուցվածքում կազմում է մոտ 2/3-ը: 2013թ. դրությամբ ԼՂՀ ՀՆԱ-ի ըստ եկամուտների ձևավորման կառուցվածքում վարձու աշխատողների աշխատավարձը կազմել է ՀՆԱ-ի 51,9%-ը, իսկ տնտեսության զուտ շահույթ և զուտ խառը եկամուտները՝ 34,2%-ը: Ընդ որում, սկսած 2006թ. ՀՆԱ-ի եկամուտների ձևավորման կառուցվածքը էական փոփոխության չի ենթարկվել:

Տնտեսության իրական հատվածի ցուցանիշների անհամամասնություններից բացի, անհամամասնություններ են առկա բնակչության կենսամակարդակը և սոցիալական ապահովության մակարդակը արտահայտող մի շարք ցուցանիշների գծով, այսպես. հանրապետությունում միջին կենսաթոշակը կազմում է անվանական աշխատավարձի 29,5%-ը, անհամամասնություններ են առկա սպառողական զամբյուղի արժեքի և նվազագույն աշխատավարձի մեծության միջև և այլն:

Լուրջ ձևախեղումներով է բնորոշվում նաև բնակչության զբաղվածության կառուցվածքը. նախ՝ հանրապետությունում աշխատանքային ռեսուրսներից տնտեսության տարբեր ճյուղերում զբաղված են վերջիններիս միայն 69,7%-ը, իսկ աշխատանքային ռեսուրսների 22%-ը կազմում են տնային տնտեսություններում զբաղված աշխատունակ տարիքի աշխատունակ բնակչությունը և, եթե հաշվի առնենք նաև այն, որ ձևախեղումներ առկա են նաև զբաղվածության ճյուղային կառուցվածքում, ապա ակնհայտ է դառնում, որ զբաղվածության ոլորտում ևս պահպանվում են այն հիմնական անհամամասնությունները, ինչ որ ԼՂՀ տնտեսության տարբեր ոլորտներում:

Թեև ԼՂՀ-ն հայտնի պատճառներով համաշխարհային տնտեսության լիիրավ սուբյեկտ չէ, սակայն համաշխարհային տնտեսական տատանումների նկատմամբ ԼՂՀ տնտեսության զգայության աստիճանը բարձր է՝ կապված հանքահումքային ապրանքների արտահանման, արտաքին տրանսֆերտների և ներմուծման ձևախեղված կառուցվածքով: Ըստ արտաքին առևտրի հաշվեկշռի, եթե 2007թ. ներմուծումը արտահանմանը գերազանցում էր 2,6 անգամ, ապա 2013թ.՝ 4,5 անգամ : Արտաքին առևտրի այդպիսի հարաբերակցության պայմաններում, մոտ ապագայում, կախվածության էական փոփոխութուն չի ակնկալվում :

Տնտեսության կառուցվածքային համամասնությունների դիտարկումների արդյունքում կարող ենք եզրակացնել, որ ներկայումս ԼՂՀ տնտեսության զարգացման գործընթացում կառուցվածքային փոփոխությունների ապահովումը դառնում են խիստ արդիական : Քանի որ տնտեսական անհամամասնությունները հիմնականում պայմանավորված են տնտեսության իրական հատվածի կառուցվածքային ձևախեղումներով, հետևապես, անհրաժեշտ է շեշտադրել տնտեսական քաղաքականության հետևյալ անկյունաքարային ուղղությունները . գործարար միջավայրի անընդհատ բարելավման միջոցով տնտեսության իրական հատվածում արդիականացման գործընթացների հիմնաքար հանդիսացող կապիտալ ներդրումների խրախուսում, ինչը նախ և առաջ պետք է ընդգրկի հարկային վարչարարության, տեխնիկական և նորմատիվային կանոնակարգման, ներդրողների պաշտպանության և աշխատանքային հարաբերությունների բնագավառները:

Կարծում ենք, այսօր օրակարգային են գործարարության իրականացման և ներդրումներ

կատարելու հիմնական արգելքների վերացման, ենթակառուցվածքների որակի բարձրացման, կորպորատիվ կառավարման մշակույթի զարգացման ու սկզբունքների ներդրման, մակրոտնտեսական կայունության ապահովման հիմնահարցերի լուծման համակարգային միջոցառումների կիրառումը, առանց դրանց դրական արդյունքները կարող են լինել հնարավորից ցածր:

Ժամանակակից պայմաններում նպատակ ունենալով մեծացնել տնտեսության դիվերսիֆիկացիայի աստիճանը և ընդլայնել արտահանելի հատվածը՝ անհրաժեշտ է, որ ԼՂՀ արդյունաբերական քաղաքականության առանցքային ուղղությունները կազմեն գոյություն ունեցող հեռանկարային արտադրական համալիրների արդիականացումն ու տնտեսության իրական հատվածին պետության ակտիվ աջակցությունը ինչպես ներկայում, այլև ապագայում՝ ընդգրկելով տնտեսության առավել լայն շրջանակներ:

ԼՂՀ տնտեսության, ժամանակակից մրցակցային գլոբալ միջավայրում, բարենպաստ դիրքավորման իրական ճանապարհը կարող է հանդիսանալ իրական հատվածում նորարարությունների ներդրման հնարավորությունների մեծացումը, արտադրողականության և բարձր ավելացված արժեք ձևավորող աշխատատեղերի աճը, նորագույն արտադրությունների և տեխնոլոգիաների յուրացումը: Տնտեսական քաղաքականության նշված շրջանակն է, որ ապահովելով տնտեսության կառուցվածքային տեղաշարժերի փոփոխություն, կնպաստի տնտեսական աճի տեմպերի բարձրացմանը, տնտեսության կարողությունների ընդլայնմանն ու կատարելագործմանը՝ հանգեցնելով նյութական և ոչ նյութական իմաստով հասարակության բարեկեցության մակարդակի, կյանքի որակի բարձրացմանը՝ միաժամանակ ամրագրելով տնտեսության անվտանգության բարձր մակարդակ:

Գրականություն

1. Ա. Աղամբեկյան, Մ. Մկրտչյան, Մ. Գևորգյան, Տնտեսական վերափոխումները անցումային շրջանում, տեսություն և արդյունքներ, Երևան, <<Պետական ծառայություն>>, 1999թ.:
2. Ա. Արշակյան, Ա. Արշակյան, Արդյունաբերական քաղաքականություն, Երևան, 2004թ.:
3. Ա. Արշակյան, Շուկայում մրցակցությունը ձևավորող ուժերը և դրանց փոխադարձ կապերի վերլուծությունը, Գործարարության զարգացման հիմնախնդիրները Հայաստանում, Ժողովածու, Երևան 2004թ.::
4. Ա. Սարգսյան, Հայաստանի հանրապետության տնտեսության կառուցվածքային բարեփոխումների կոնցեպտուալ մոտեցումները, Երևան, 2008թ.:
5. Ա. Զաքարյան, ՀՀ արդյունաբերության կառուցվածքային համակարգը և ազգային շուկայի հավասարակշռության հիմնախնդիրները, Տնտ. դոկտորի գիտակ. աստճանի հայցման ատենախ. սեղմնագիր, Երևան ,1998թ.:
6. А. С.Пелиха, Экономика отрасли ,"Феникс", 2004г..
А. С. Булатов, Экономика России и других постсоветских стран, Москва, 2005г..
7. ԼՂՀ վիճակագրական տարեգիրք 2002-2008թթ.:
8. ԼՂՀ վիճակագրական տարեգիրք 2008-2012թթ.:

Տեղեկություններ հեղինակի մասին.

Շուշանիկ Ասրյան - տ.գ.թ. ԱրՊՀ տնտեսագիտության տեսության և կառավարման ամբիոնի դոցենտ

E-mail : shushanik.asryan@yandex.ru

Հոդվածը տպագրության է երաշխավորել խմբագրական կոլեգիայի անդամ, տ.գ.թ., Մ.Մ.Մինասյանը: